

Անբերով զբանս՝ մեր համախմբեալքս առաջի
Գլխոյդ Ազգիս, շնորհաւորեմք զտօն մուտ գործելոյ
երկնաւոր Քահանայապետին յիւր Աստուածային
Աթոռ, և զտօն համբառնալոյ Ձերոյ յառաքելա-
կան Աթոռ մեծի Քահանայապետութեան Հայոց,
և ընդ նմին վերախնկեմք զաղօթս առ բարձրեալն
Աստուած՝ երկարել զկեանս Ձերոյ Աւհաստու-
թեան վասն կատարելագործելոյ զսկսեալ ՚ի Ձէնջ
ազգաշահ գործս, հաստատուն պահել զՄայրս մեր
Սուրբ Վաթողիկէ Էջմիածին մինչ ցկատարած աշ-
խարհք և զցրուեալ ազգս Հայոց ՚ի վերայ երե-
սաց երկրի ՚ի մի յօդ զուրից ընդ հովանաւորու-
թեամբ մօրն Լուսոյ Արքայ Էջմիածնի, և ընդ միով
հայրապետական զաւազանաւ: Տէր պահեսցէ ըզ-
մուտ և զել քո յայսմ հետէ մինչև յաւիտեան .
Ամէն:

Ստեփաննոս աւագ Քահանայ Մանդի-
նեանց, ուսուցիչ Կրօնագիտութեան եւ
Եկեղեցական պատմութեան Ներսիսեան
Հոգեւոր եւ Ազգային Գլխոյն:

է 24 Մայիս 1870 -ի.

ի Տ փ խ ի ս :

ՎԵՀԱՓՍՈՒ ՀԱՅՐ

Բարեպաշտ կրօնաւոր մի կամենում էր խօսք
ասել նորան սպասող ժողովրդին: Մարդկային
չքաւորութեան խորին զգացմամբ շարժված կրօ-
նաւորն աղաղակեց. "Բարեկամներ, եկէք լաց լի-
նինք": և ամենքը ընկան գետին և արտասուք թա-
փեցին:

Երբ ես առաջ կանգնեցի այստեղ, գիտեմ որ
բարեպաշտութեամբ և Հայրասիրութեամբ լըց-
ված այս ժողովուրդը՝ սպասում է ինձանից այս
հանդէսին յարմարաւոր խօսք: Բայց իմ շքեղութիւնս
աղանայ փակվում են, երբ տեսնում եմ այստեղ
կանգնած իմ Տէրը, Հայկական Ազգի Աւհաստու
Վաթողիկոսը, Հայկական Ազգի ցանկութիւններ
և նպատակներ մի Աւհ և Փառաւոր անձի
մէջ ամփոփված: Ո՞վ կհամարձակէ երկարաբա-
նել, երբ կանգնած է Աւհաստու Գէորգ Գ. Վա-
թողիկոսը՝ իւր Ազգաշէն գործերը և նպատակնե-

րը Աւհ ճակատին դրօշմած: Գոնէ ես տկարա-
նում եմ, Եւ ինչ կարելի էր ասել այս Հայրա-
սէր ժողովրդին, որը հարիւր անգամ ասելի հզօր
կերպով չվկայէր այս հրաշափառ հանդէսը:

Ահա հաւաքվել է Թիֆլիսի բոլոր Հայասէր և
լուսազոյն ժողովուրդը: Բարեհաճեցէք նայել, Աւ-
հաստու Հայր, իւրաքանչիւրի երեսին. միտիժա-
րութեան բազմապայտ զգացմունքը դուրս են թըռ-
չում սրտերից. նայեցէք իւրաքանչիւրը մարմնա-
ցած ուրախութիւն դարձած է: Եւ սա ի՞նչ բաղդ
է Թիֆլիսի համար. այսօր Հայկական Ազգի Վա-
թողիկոս Աւհաստու Գէորգը տօնում է իւր
սուրբ Օծութեան օրը Թիֆլիսի ժողովրդի հետ:
Նախանձեցէք ուրեմն Թիֆլիսցիներին դուք, Թիւր-
քիարնակ Հայեր. դուք Հնդկարնակ, Պարսկա-
րնակ Հայեր, և դուք՝ ամենայն Հայեր: Թիֆլիսը
փառաւորվում է այսօր Աւհաստու Վաթողիկոսի
մեծ փառքով, Հայր, Ազգի Հայր, մեր սէրը զէպի
Ազգը անպատում է, ուրեմն ինչպէս յայտնեմ
խօսքով մեր իրքեւ Ովկիանոս լայնատարած թէրը
զէպի մեր Աւհաստու Հայրապետը: Եւ եթէ չկայ
ոք մին, որ չէ շարժվում այս հրաշափառ տեսա-
բանից, նրան կշարժէ մի թէ մարդկային թոյլ
խօսքը:

Եւ ահա մեր Վաթողիկոսը Թագադրված և Օծ-
ված, Հայր, Թագը Ձեր Գլխի վերայ մեզ փառք
է, իսկ Ձեզ — քաջագործութիւն: Այդ Գաւազա-
նը, որ կարօղ է կրել Հայկական Վաթողիկոսի
հզօր Ձեռը միայն, մեր Եկեղեցուն անդորրութիւն
է, իսկ Ձեզ — հսկողութիւն: Եւ բոլոր հիանալի
զարդերդ մեզ միտիժարութիւն են, իսկ Ձեզ —
բնունաւորութիւն:

Բնունաւորութիւն արդարեւ և քաջագործու-
թիւն: Եւ վայել է Ձեր իմաստութեանը աշխար-
հիս հնազոյն Եկեղեցւոյ Հայրապետութիւն, որ
երկնքի և երկրի Գառաւորի ձայնով կդատէք և
կանօրինէք արդարութեամբ և իմաստութեամբ,
ոչինչ խտտելով աջ կամ ահեակ:

Իսկ սուրբ Օծումդ, մի թէ միայն արտաքին
հասարակ արարողութիւն էր: Ոչ, ամենևին ոչ,
Երբ Գաւթը Աստուծոց Թագաւոր ընտրվեցաւ
Իսրայէլին և սուրբ իւղով օձվեցաւ, որովհետեւ
"կարմիր էր դէմքով, գեղեցիկ աչքերով և սիրուն

տեսքով, սուրբ զիրքը ասում է: "Նւ խաղաց Հոգի Տեսան ՚ի վերայ Գաւթի յօրէ յայնմանէ և առ յապոյ": Նւ այն Հոգին անսպառ և անզաղար խաղում է Ձեր վերայ, և այն Հոգւով լուսաւորումէք և պաշտպանումէք Գուք Հայկական Եկեղեցի:

Թող աստեղագէտներն ապացուցանեն, թէ երկիրը շրջում է արեգակի շուրջ կողմ: Մեր Արեւելիք շրջում է մեր շուրջ կողմ և շրջում է անզաղար նորա համար, որ մենք բարեպաշտութեամբ վարենք մեր կեանքը: Երջի՛ր ուրեմն, ով Արեգակը մեր, շտապով յաջողութեամբ, շրջի՛ր Հսկայական քայլերով բոլոր Բո բարի նպատակներով և բարոյապէս փրկի՛ր Ազգը, կեանքիդ մտնելու կողմը միայն մի՛ շտապեր: Այս զէպքում, որպէս Յեսու Նաւեայ, մեր ձեռները և սրտերը բարձրացած, կաղաղակենք: "Կանգնի՛ր, Արեգակ, և մի՛ շարժվի՛ր մինչև Բո մեծ նպատակներին առաջ եկող բոլոր արգելքները փառարանօրէն յաղթես: Գուք արդէն յաղթեցիք բազմամիւ արգելքներ և դժուարութիւններ՝ Ձեր իմաստութեամբ: Մեր սէրը դէպի մեր Հայրը՝ չունի սահմաններ, անյաղժելի է. բայց Ձեր հայրական սէրը՝ զերզանցում է մեր զգացմունքները: Հայր, Գուք մեզ ևս յաղթեցիք: Նւ ո՞վ կարող էր հասնել Ձեր այս փառքի բարձրութեանը: Ի՛նչ պատիւ կարող էինք մատուցանել Ձեզ՝ որ հաւատարիւր ամբողջ Հայկական Ազգի ընտրեալ լինելու անփոխարինելի պատուին: Գուք Հայրապետ էք ոչ միայն Նեղանով յաջորդված, այլ Ձեզանով և պահպանված Եկեղեցոյ: Հայր, Աւհափառ Հայր, փորձառութեան կրակով մաքրազարդված Հայր: Գուք ունիք պաշտպանել և կարգաւորել Հայկական Եկեղեցի և նորա պաշտօնեաներ: "Աստուծարաններ, ուսումնարաններ և միշտ ուսումնարաններ" փրկարար ձայնը Ձեր Գահէր բարձրութիւնից հասնում է անզաղար Հայերի ականջին: Եթէ Հայկական պատմութիւնը պիտի այսուհետև ևս շարունակվի, Գուք պատրաստումէք նորա մէջ Ձեզ համար ոսկեղէն տողերի տեղը: Գուք կամենումէք զոհել Ձեզ Հայկական Ազգի կարելի բարեբաղդութեան համար: Ազնիւ գործակատարներ Ազգիս բարոյական փրկութեան համար միանգամայն ՚ի հուր և ՚ի ջուր պատրաստ անձներ Գուք իմանումէք գտնել Հայերիս մէջ: Աւհափառ Հայր, Մեծ գործի դժուարութիւններն պիտի Ձեր փառքը մեծացնեն, բայց թող դժուարութիւնների յիշատակումն չվշտացնէ Ձեր հոգին:

Աչինչ, ոչինչ թող չխանդարէ Ձեր և մեր սուրբ ուրախութիւնը: Աւրախ լին յոյժ, դուտոր Սիօնի, քարոզեալ դուտոր Երուսաղէմի. ահա Թաբաւոր քո գոյ առ քեզ արդար և փրկի: Այո Իսրայէլը կուրախանայ Աստուծու վերայ: Սիօնի որդիները կուրախանան իրանց Թագաւորի վերայ: Թող բոլոր բազմութիւնք սկսէ Աստուած գովել. օրհնված է Աստուծոյ անունով եկողն:

Մեր սրտերը բորբոքող ընդհանուր ուրախութիւնը թող շինէ մեր սիրալառ սրտերից մի բաղմարումանդակ բուրլառ Աստուծոյ առաջ, որ մատուցանենք Ձեր սրտի խունկը նորան, որ պարգևեց մեզ Աւհափառ Գէորդը:

Հայեր, իմ պաշտելի Հայեր, Ձեր Ասթողիկոսին բարձր և իւր յաւիտենական սէրով սիրող և հաւատարիմ Հայեր, մտածեցէք—ունի՞նք արդեօք Ազգային պարծանք ուրիշ մի ինչ՝ բացի Ասթողիկոսից: Իմ ազնիւ Հայեր, մեր փառքը և մեր պարծանքը մեր մէջ: Հանդիսացած է, մեր Տէրը և մեր Հայրը ահա մեզ հետ է, իւր հետ բերումէ մեզ փրկութիւն և կեանք: Աղօթենք ուրեմն:

Աւհափառ Հայր, Թխֆխի հասարակութիւնը և Քրիստոսի սրբազան և սուրբ պաշտօնեաներն ահա ամենաբարձր սէրով և զարմացմամբ, ազնիւ յոյսերով և ցանկութիւններով լի որդիական ակնածութեամբ կանգնած ենք Ձեր առաջ, և սպասում ենք Ձեր քաղցր ակնարկութեան, որ համարձակեք մօտենանք Բո հոյակապ փառքին, արժանանանք Բո սուրբ Աչին և ուրախանանք: Աւրախանանք այո, որ մեծ է մեր Ասթողիկոսը, մեծ է Գէորդ Դը, ամեն Հայերի Աւհափառ Ասթողիկոսը մեծ է:

Գիտեմ իմ հոգւոյ բոլոր երեւակայութիւնները տկար են փառքիդ ստուէրն անգամ նկարել. ուստի թող տվէք հիանանք հրաշափառ Տէրութեանդ, և մխիթարութեան արտասուներով աղաղակենք Սաղմոսերգուի հետ: "Օրհնեալ է Տէր Աստուած Իսրայէլի, որ առնէ զսքանչելիս միայն և օրհնեալ է անուն սուրբ փառաց յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր, եղիցի եղիցի":

Աեցցէ ուրեմն Աւհափառ Հայր Գէորդը, մեր Ասթողիկոսը, կեցցէ Ազգի շինութեան համար, կեցցէ որպէս ժողովրդի բարի Հայր, որպէս Եկեղեցւոյ ընտիր Քահանայապետ, որպէս Հայկական Ազգի չոր և ցամաք անապատի իմաստուն շինող և բարեզարդող: Աեցցէ, կեցցէ:

[[պրիմաննսս]] [[պրիման]]

Հայկական Աշխարհ. Օրագրի Կմբագրող:

Թէ՛՛՛՛

1870, Մայիսի 24:

ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ

Այս օրս, Ձեր սուրբ օծման երրորդ տարեդարձը, շատ արժանայիշատակ օր է, քան թէ կարելի էր լուութեամբ անցանել դուրա մօտից, առանց հասկանալու դորա խորհրդաւորութիւնը, թող տալ դմա զնալ միանալ մեր կեանքի անցած օրերի հետ: